ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Չեխիայի Հանրապետություն (Պրահա) գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը.**
   Աննա Ժամակոչյան.
   Անի Չիլինգարյան.
   Անահիտ Պարզյան.

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ.

   ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության պետի առաջին տեղակալ.

   ««ՆՈՐՔ» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի գործադիր տնօրեն.

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Չեխիայի Հանրապետություն (Պրահա), 2024 թվականի մայիսի 26-ից հունիսի 1-ը.

4. **Հրավիրող կողմը.**
   «Մարդը կարիքի մեջ» չեխական հասարակական կազմակերպություն.

5. **Գործուղման նպատակը.**
   Ուսումնասիրել միգրացիայի կառավարման և ինտեգրման գործընթացների իրագործումը, կարողությունների զարգացումը և միջազգային լավագույն փորձը:

6. **Քննարկված թեմաները.**
   Այցի ընթացքում քննարկվել են հետևյալ թեմաները.
   - ✓ Չեխիայի միգրացիոն օրենսդրություն;
   - ✓ աշխատանքային միգրացիայի ծրագրեր;
   - ✓ վարչական ընթացակարգերի թվայնացում;
   - ✓ օտարերկրացիների համար տեղեկատվական համակարգ և բնակիչների օրակարգերի թվայնացում;
   - ✓ թվայնացման արդի հիմնախնդիրները Եվրոպայում,
   - ✓ պետական ինտեգրման ծրագիր, օտարերկրացիների ինտեգրման ընթացակարգ,
     - ✓ փախստականների հետ կապված հարցերի կառավարում,

- ✓ զբաղվածություն, աշխատաշուկա և թվայնացում,
- ✓ Չեխիայում սոցիալական ծառայությունների ստանդարտացում:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

1. **Հանդիպում ՆԳՆ-ում**.
   Չեխական կողմից ներկայացվել են հետևյալ թեմաները.
   - ✓ միգրացիոն օրենսդրություն,
   - ✓ աշխատանքային միգրացիայի ծրագրեր և վարչական ընթացակարգերի թվայնացում,
   - ✓ օտարերկրացիների համար տեղեկատվական համակարգ և բնակիչների օրակարգերի թվայնացում,
   - ✓ թվայնացման արդի հիմնախնդիրները Եվրոպայում,
   - ✓ պետական ինտեգրման ծրագիր:

2. **Հանդիպում Չեխիայի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Կատերինա Շտեպանկովայի հետ**"
   Չեխական կողմը՝ ի դեմս Կատերինա Շտեպանկովայի, ներկայացրել է զբաղվածության միջոցով միգրանտների և խոցելի խմբերի ինտեգրման ոլորտային գործիքակազմերը, աշխատանքային միգրանտների ներգրավման քաղաքականությունը և տեղական աշխատաշուկայի ՝պաշտպանության գործիքները, նշելով նաև պատրաստակամությունը՝ Հայաստանից բարձր որակավորում ունեցողներին որպես աշխատանքային միգրանտներ ներգրավելու մասին:

   Հայկական կողմը՝ ի դեմս Աննա Ժամակոչյանի, ներկայացրել է աշխատաշուկայում խոցելի խմբերի, այդ թվում՝ օտարերկրացիների ներգրավմանն ուղղված Կառավարության քայլերը: Մասնավերապես՝ ներկայացվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության ներքո՝ երկրում սոցիալական պաշտպանության 4 հիմնական ոլորտների ծառայությունների (կենսաթոշակներ, ֆունկցիոնալության գնահատում, սոցիալական աշխատանք և աջակցության նպաստներ, զբաղվածության ծառայություններ) ինտեգրման քաղաքականությունը: Ներակայացվել է նաև ինտեգրված ծառայությունների տեխնոլոգիական լուծումների Հայաստանի փորձը, մասնավորապես՝ ««ՆՈՐՔ» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի կողմից մշակված E-work հարթակը: Անահիտ Պարզյանը մանրամասներ է ներկայացրել հարթակի գործառնական հնարավորությունների մասին՝ ի պատասխան չեխական կողմին հետաքրքրած հարցերի:

3. **Հանդիպում Չեխիայում Հայաստանի Հանրապետության դեսպանի հետ.**
   Հանդիպման ընթացքում քննարկվել են Հայաստան–Չեխիա և Հայաստան–Եվրոպա համագործակցության զարգացման հեռանկարները՝ ոլորտային քաղաքականությունների համատեքստում, մասնավորապես՝ եվրոպական երկրներում Հայաստանի կողմից առաջարկվող բրենդների ներկայացման հնարավորությունները: Հաշվի առնելով չեխական կողմի հետ հանդիպումների ընթացքում դրսևորած հետաքրքրությունները ՀՀ սոցիալական պաշտպանության ոլորտի ինտեգրման և թվային գործիքների նկատմամբ՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից առաջարկվեց ներկայացնել միասնական սոցիալական ծառայությունների ներդրման փորձը՝ ՀՀ-ում սոցիալական պաշտպանության ծառայությունների ինտեգրման նպատակով, ինչպես նաև մշակված սոցիալական ծառայությունների տեղեկատվական հարթակների (E-work, E-disability, E-Social) ներկայացման և դրանց ադապտացիայի հնարավորությունները: Մասնավորապես՝ եվրոպական երկրներում դիրքավորել Հայաստանը որպես Social GOVTech–ի առաջատար երկիր՝ հիմք ընդունելով վերջին տարիներին սոց. պաշտպանության ոլորտի թվային փոխակերպման առաջընթացը և ձեռք բերված արդյունքները:

4. **Հանդիպում Չեխիայի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում.**
   ՉՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Կատերինա Շտեպանկովայի հետ չեխական կողմից ներկայացվել են հետևյալ թեմաները.
   - ✓ զբաղվածություն, աշխատաշուկա և թվայնացում:

5. **Հանդիպում PIN PSI-ում.**
   Չեխական կողմից ներկայացվել են հետևյալ թեմաները.
   - ✓ սոցիալական ինտեգրման ծրագրեր;
   - ✓ աշխատանք փախստականների հետ Օլոմոուց քաղաքում:

6. **Այցելություն օտարերկրացիների ինտեգրման աջակցության կենտրոն – Օլոմոուց տարածաշրջանում.**
   Չեխական կողմից ներկայացվել են ծառայությունների մատուցման նպատակները, ընթացակարգերը և այլ մարմինների հետ համագործակցության սխեմաները:

7. **Հանդիպում ծառայություն մատուցողի հետ՝ Arcidiecézní Charita (TBC), Ինտեգրման և միգրացիայի ասոցիացիա SIMI.**
   Չեխական կողմից ներկայացվել են ծառայությունների մատուցման նպատակները, ընթացակարգերը և այլ մարմինների հետ համագործակցության սխեմաները:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**
ՉՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Կատերինա Շտեպանկովայի հետ հանդիպման արդյունքում ձեռք է բերվել պայմանավորվածություն նախարարությունների միջև երկկողմ մասնագիտական քաղաքականությունների քննարկումները շարունակելու շուրջ, մասնավորապես՝ չեխական կողմից աշխատաշուկայում խոցելի խմբերի ներառման գործիքակազմերի, ծրագրերի մասին առավել մանրամասների, իսկ հայկական կողմից թվային սոցիալական ծառայությունների հարթակների ներկայացման նպատակով:

9" **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**
Ակնկալվում է, որ նախարարությունների ներկայացուցիչներն առաջիկայում կպայմանավորվեն ««ՆՈՐՔ» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի կողմից թվային փոխակերպան հայեցակարգի և հիմնական գործիքների ներածական ներկայացման շուրջ՝ առցանց հանդիպման միջոցով, ինչը հիմք կհանդիսանա ՉՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության մասնագետների Հայաստան հնարավոր այցի համար:

10"**Ստորագրությունը, ամսաթիվը:**

07.06.2024թ.